

021503.00.6 Թատերական արվեստ

021503.02.6 Ռեժիսուրա (դրամատիկական թատրոնի ռեժիսուրա) մասնագիտության գծով բակալավրի կրթական ծրագրով ԵԹՎՊԻ-ի դիմորդը հանձնում է չորս քննություն.

1. Դերասանի վարպետություն
2. Ռեժիսուրա (գործնական)
3. Հարցազրույց
4. Հայոց լեզու, գրականություն (ոչ մրցութային)

Դիմորդը փաստաթղթերի հետ պետք է ներկայացնի որևէ պիեսի վերլուծություն (էքսպլիկացիա):

Դերասանի վարպետություն քննության պահանջները և գնահատման չափանիշները

(պետք է ներկայանալ մասիկներով).

- ✓ առակ (չափածո), արձակ, բանաստեղծություն՝ 0-10 միավոր,
- ✓ ստեղծագործական այլ ընդունակություններ (պար, մեներգ, գործիքային կատարում, նկարչություն և այլն)՝ 0-10 միավոր:

Ռեժիսուրա քննության պահանջները և գնահատման չափանիշները

(պետք է ներկայանալ մասիկներով, տրիկոյով).

- ✓ Էտյուդ (նախապես պատրաստած, տևողությունը մինչև 3 րոպե)՝ 0-10 միավոր,
- ✓ Էտյուդ (քննության ժամանակ հաձնարարվող)՝ 0-10 միավոր:

Հանձնարարվող էտյուդը բեմադրելիս որպես դերակատարներ կարող են ներգրավվել այլ դիմորդներ:

Հարցազրույց քննության պահանջները և գնահատման չափանիշները.

- ✓ դրամատուրգիական երկի իմացություն և վերլուծություն՝ 0-7 միավոր,
- ✓ արվեստագետի ստեղծագործական-կենսագրական դիմանկար՝ 0-3 միավոր,
- ✓ հարց համաշխարհային մշակույթի պատմությունից՝ 0-3 միավոր,
- ✓ դիմորդի կողմից ներկայացված պիեսի վերլուծության (էքսպլիկացիայի) քննարկում՝ 0-7 միավոր:

Քննությունն ընթանում է նախապես հայտարարված թեմաների շրջանակում՝ հարցատոմսերով:

«Հայոց լեզու, գրականություն» առարկայի քննության գնահատականը մրցութային միավոր չէ:

021503.02.6 Ռեժիսուրա (դրամատիկական թատրոնի ռեժիսուրա) մասնագիտության 2017թ. ընդունելության ծրագիր

Պիեսներ

- 📖 Սոֆոկլես «Անտիգոնե»
- 📖 Վ.Շեքսպիր «Ռոմեո և Ջուլիետ», «Համլետ», «Օթելլո», «Լիր արքա»
- 📖 Ժ.-Բ.Մոլիեր «Դոն Ժուան», «Տարտյուֆ»
- 📖 Ֆ.Շիլլեր «Ավագակներ»
- 📖 Հ.Իբսեն «Ժողովրդի թշնամի» («Դոկտոր Սթրեման»), «Տիկնիկների տուն» («Նորա»)
- 📖 Ժ.Անույ «Արտույտը»
- 📖 Ա.Պուշկին «Փոքրիկ ողբերգություններ»
- 📖 Մ.Լերմոնտով «Դիմակահանդես»
- 📖 Ա.Գրիբոյեդով «Խելքից պատուհաս»
- 📖 Ն.Գոգոլ «Ռևիզոր»
- 📖 Ա.Օստրովսկի «Ամպրոպ», «Եկամտաբեր պաշտոն»
- 📖 Ա.Չեխով «Երեք քույր», «Բալենու այգի»
- 📖 Մ.Գորկի «Հատակում»
- 📖 Գ.Սունդուկյան «Պեպո»
- 📖 Հ.Պարոնյան «Պաղտասար աղբար»
- 📖 Ալ. Շիրվանզադե «Պատվի համար»
- 📖 Լ. Շանթ «Հին աստվածներ»
- 📖 Դ. Դեմիրճյան «Քաջ Նազար»

Դերասաններ

- ✓ Պետրոս Ադամյան
- ✓ Սիրանույշ
- ✓ Հովհաննես Աբելյան
- ✓ Վահրամ Փափազյան
- ✓ Հրաչյա Ներսիսյան
- ✓ Ավետ Ավետիսյան
- ✓ Մհեր Մկրտչյան
- ✓ Մետաքսյա Սիմոնյան
- ✓ Խորեն Աբրահամյան
- ✓ Սոս Սարգսյան
- ✓ Գայա Նովենց
- ✓ Արմեն Զիգարխանյան
- ✓ Վլադիմիր Մարյան

Բեմադրիչներ

- ✓ Կ.Ս.Ստանիսլավսկի
- ✓ Վ.Է.Մեյերխոլդ
- ✓ Ե.Բ.Վախթանգով
- ✓ Արմեն Գուլակյան
- ✓ Վարդան Աճեմյան
- ✓ Հրաչյա Ղափլանյան
- ✓ Խորեն Աբրահամյան

Այլ թեմաներ

- ✓ Հայ կինո՝ Հ.Բեկնազարյան, Հ.Մալյան, Ս.Փարաջանով, Ա.Փելեշյան, Ֆ.Դովլաթյան
- ✓ Հայ անվանի կոմպոզիտորներ. Կոմիտաս, Ա.Սպենդիարյան, Ա.Խաչատրյան, Ա.Բաբաջանյան
- ✓ Հայագրի անվանի նկարիչներ. Հովհ.Այվազովսկի, Մ.Սարյան, Մ.Ավետիսյան, Վ.Սուրենյանց, Ե.Քոչար
- ✓ Վերածննդի դարաշրջանի նկարիչներ. Լեոնարդո դա Վինչի, Միքելանջելո, Ռաֆայել
- ✓ Գ.Նարեկացի «Մատյան ողբերգության»

- ✓ Հովհ.Թումանյանի, Եղ.Չարենցի, Վ.Սարոյանի ստեղծագործությունները
- ✓ Երևանի թատրոնները (Խաղացանկը), մշակութային օջախները, հուշարձանները

Առաջարկվող գրականության ցանկ

1. Կ. Ստանիսլավսկի «Իմ կյանքն արվեստում», Եր., 1954
2. Վ. Փափազյան «Հետադարձ հայացք», 2 հատոր
3. Ռ. Զարյան «Միրանույշ», Եր., 1956; «Ադամյան. Արվեստը» Եր., 1960; «Ադամյան. Կյանքը», Եր., 1961
4. Հ. Հովհաննիսյան «Հայ թատրոնի պատմություն. XIX դար», Եր., 1996
5. Սովետահայ թատրոնի պատմություն, Եր., 1967
6. Հայկական Սովետական Հանրագիտարան
7. Театральная энциклопедия
8. Տարբեր տարիներին հրատարակված ալբոմներ և ժողովածուներ՝ նվիրված արվեստի և գրականության ականավոր գործիչներին